Ելույթ
«Տնտեսական քաղաքականության և քաղաքացու բարեկեցության փոխազդեցության հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի վերաբերյալ (թեմայի ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Քրիստինե Բաղդասարյան)

Տնտեսական քաղաքականությունը տնտեսական միջոցառումների համակարգ է, որը իրականացվում է կառավարության տնտեսական գործողությունների ընտրությամբ և իրականացում մակրոտնտեսական մակարդակով: Տնտեսական քաղաքականության նպատակները սերտորեն շաղկապված են տվյալ պահին երկրի տնտեսական վիճակի, տնտեսական համակարգի հետ: Տնտեսական քաղաքականության սոցիալական բովանդակությունը, նրա հիմքում ընկած գաղափարները, նպատակներն ու դրանց իրագործման միջոցները որոշվում են հասարակարգի բնույթով, արտադրության միջոցների նկատմամբ սեփականատիրական հարաբերություններով: Ինչպես ամեն մի քաղաքականություն՝ այն պատմականորեն որոշակի արտադրաեղանակի էկոնոմիկայի խտացված արտահայտությունն է: Տնտեսական քաղաքականության վրա, որը մշակում է իշխանության գլուխ կանգնած քաղաքական կուսակցությունը, ազդում են դասակարգային ուժերի հարաբերակցությունը, երկրում ու միջազգային ասպարեզում դասակարգային պայքարի զարգացման աստիճանը, պատերազմի ու խաղաղության իրադրությունը և այլ գործոններ:

Ժամանակակից պայմաններում տնտեսական քաղաքականությունն ավելի ու ավելի է ձևավորվում որպես գիտական ինքնուրույն ուղղություն, որի առարկան էկոնոմիկայի քաղաքական ղեկավարման գիտական հիմունքների ու սկզբունքների հասարակարգի զարգացման տարբեր փուլերում տնտեսական քաղաքականության իրականացման փորձի ուսումնասիրությունն է:

Զարգացած շուկայական տնտեսությամբ երկրներում իրականացվող սոցիալական քաղաքականության ու վերափոխումների ներկա փուլը, աչքի է ընկնում սոցիալ-տնտեսական օբյեկտիվ գործոնների ազդեցությամբ պայմանավորված մի շարք առանձնահատկություններով, որոնք բնութագրվում են մի կողմից՝ լիբերալ գաղափարների արմատացմամբ, մյուս կողմից՝ պետության սոցիալական գործառույթների ընդլայնմամբ: Ձևավորվում է սոցիալական պետության վերաբերյալ բոլորովին նոր պատկերացում. դա մի յուրատեսակ մեխանիզմ է, որի գերխնդիրն է շուկայի հիմնահարցերի ու սոցիալական նպատակների միջև հակասության չեզոքացումը: Ակնհայտ է, որ հիմնական տնտեսական ցուցանիշների շարունակական աճը կհանգեցնի սոցիալական ոլորտին ուղղվող միջոցների աճի, իսկ բարենպաստ սոցիալական կլիմայի առկայությունը իր հերթին տնտեսական ակտիվության խթանման ու ներդրումային միջավայրի բարելավման կարևորագույն նախապայման է: Հետևաբար ժամանակակից պայմաններում առաջատար տնտեսությունների սոցիալական քաղաքականության վերջնական նպատակը բարձր տնտեսական ցուցանիշների ապահովումն է նաև ի հաշիվ սոցիալական գործոնների, և սոցիալական ռիսկերից ապահովվածության բարձր մակարդակի հաստատումն է ի հաշիվ արդյունավետ գործող տնտեսության:

Թեմայի շրջանակներում հրապարկվել են 34 հոդվածներ և 1 անգլալեզու գիրք, որոք հրապարակվել են արտասահմանյան բարձր հեղինակություն ունեցող

ամսագրերում և ժողովածուներում, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից երաշխավորված պարբերականներում:

Այսքանը, շնորհակալություն: